



### ՅԱՆԱ ԹԱՐԱՎԱԿՈՐԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մի թաքավոր կար, կենում էր Անա քաղաքը՝ Դրան իրեք հատ տղա ուներ. մենձ տղեն ու միշնեկ տղեն խնդրեցին հորը թե. — Իրավունք տու մեզ՝ գնանք էրկու հատ այլ բերենք քեզ հըմար:

— Որթիք, գնացե՛ք, իրեք սար իրավունք ունեք ավ էթալու, համա չէթաք Ղարաբուկուտ Ղահրըմանի սարը. ո՛չ մի մրշիմ, ո՛չ մի օց իրավունք շոմի էտ սարը նի՛լնի. դա իրա ամարանոցն ա, էթաք էլ օքուտ շեք ունենալ:

Տղերքը ՞իրանց նետները վե կալան, ՞իրանց ձիանը նի էլան, գնացին: Գնացին հասան էտ իրեք սարի կուշտը:

— Է՛, ախաքեր, — ասեց մենձը, — արի էթանք էն սարը, որ թաքավորը ասըմ էր, տենենք մեզ ինչ կըլի:

Գնացին էտ սարը. տեհան մարալը մի դըհիցն ա ման գալի, կխտարը մի դըհիցն ա ման գալի, ինչ շուռա անասուն ասես՝ էտ սարըմը կար, ժաղկըներով, ՞ախապրներով լիքը:

— Դե՛հ, ախաքեր, — ասեց, — նետք վե կալ, տենենք քանի մարալ, կխտար ու ջեյրան կարանք վե քցիլ:

Մենձ ախաքերը իրեքը վե քցեց, պումուր ախաքերը՝ էրկուարքաշ տալով բերին ՞ախապրի դրաղին վե դրին:

— Դե՛հ, ախաքեր, բե կրակ անենք, մի խորոված անենք, ուտենք:

Մըն էլ սեհան մի ագռավ էկավ քարերին կանեց ու դըռռաց,  
զըռռաց, դըռռաց:

— Ախաղե՛ր, մեր կերածը հարամ ա, որ սրան վե շբցենք, նե-  
տով տո՛ւ թող սատկի, մեր զահեն տարավ, — ասեց մենձ ախաղերը  
պումուրին:

Պումուրը նետը քցեց՝ դիպավ ու. ագռավը բանցրացավ, մի  
պումուր սև ամպ դառավ, մի ընենց սելավ թափեց, որ հարիր փթա-  
նոց քարերը քաշեց ածեց ծովկիրը: Տղեքանցն էլ սելավը քշեց տա-  
րավ. մընի փափախը մնաց քարի արանքը,

Թաքավորը տեհնավ որ տղեքը չէկան, հինգ օր համփերեց՝ չէ-  
կան, ասեց. — Պումուր տղա՛, իմ տակի ձին նի՛լ, գնա սարերը ման  
արի, տե՛ս քու ախաղերտինքը ինչ տեղ են,

Պումուր տղեն ձին նի էլավ գնաց էն իրեք սարը ման էկավ,  
զատ շտեհավ:

— Գնամ, — ասեց, — Ղարաբուկուտ Ղահրըմանի ախշկա սարն  
էլ ման զամ, տենեմ ինչ նշան կա:

Նի էլավ տեհնավ, որ մենձ ախաղոր քթակը քարի արանքը մը  
մնացել ա. — Հե՛յ վա՛խ, — ասեց, — իմ ախաղերը ըստեղ վնասվել  
ա: — Վե կալավ քթակը, տարավ հոր կուշտը:

— Ա՛յ որթի, ի՞նչ խարար:

— Գնացի իրեք սարը ման էկա, հեշ բան շտեհա. գնացի Ղա-  
րաբուկուտ Ղահրըմանի ախշկա սարը՝ տեհնա ախաղորս փափախը  
քարի արանքը մնաց, վեր եմ կալել բերել՝ քեզ շանց տամ:

— Շատ լավ ա է՛լել, որ ըտենց ա էլել, — ասեց հերը, — խի՞  
չի ինձ լսեցին: Դու էլ լսես՝ ըտենց էլ դու կըլես:

Մերն իմացավ, շատ արտասունք թափեց. հեղեղի պես հ'աշ-  
կերիցը թափը էր, էտ ձենին պումուր տղեն նի մտավ մոր օթախը. —  
Մե՛ր, — ասեց, — իմ հոքու պարտքը ըլի, որ էթամ էտ Ղարաբուկուտ  
Ղահրըմանի ախշկա շլինքը կտրեմ, բերեմ շանց տամ քեզ, որ դու  
հովանաս: Համա, հորս շասես, ես պըտի թաքուն էթամ:

Պումուր տղեն նի մտավ գոմը, ասեց. — Թավլարաշի, ո՞ր ձին  
ա զլսավոր ձին, ինձ շանց տո՛ւր:

— Որթի զա՛ն, ի՞նչ պըտի անես ձին: Քու ձի նի՛լելու վախտը  
չի, հալա զահել ես:

Առ հա մի սիլլա դրա սըֆաթին. — Անիրա՛վ ծերունի, ես քեզ-  
նից բան եմ ուզըմ, դու խի՞ ես խնահըմ:

— Է՛, թաքավորի որթի, ես մեղ'ասսու, քու պապի ձիու քու-  
ռակը կնի'լնս ու կէթաս, աստված քեզ հետ: Դե՛, յավաշ, ես քեղ  
մի բան էլ ասեմ. վե կալ պապիդ թուրը, վե կալ Հազարեն ղալսանը  
ու պապիդ գուրզը՝ կախ էլած ա, արի՛ տանեմ շանց տամ:

Օթախի դուռը բաց արուց թավարաշին, ասեց.—Համեցե՛ք,  
թաքավորի որթի, է՛ս թուրն ա պապինըդ, էս պապիդ ղալսանն ա,  
էս էլ գուրզն ա: Աստված քեզ ուժ տա, որ բանացընես:

— Դե գնա՛, թավարաշի, քուռակը թամքա ու դուա քաշա:

Տղեն գնաց խազնեն նի մտավ, իրա շափ փող վե կալավ դրուց  
խուրշինը, դուա էկավ, տեհավ թավարաշին ձին թամքել՝ իրա ճամ-  
փեն ա պահըմ:

— Է՛, ծերունի, — ասեց, — ինձ շանիծես, ոտիդ մեռնեմ. նրա  
ճամար եմ ասըմ, որ քեզ մի սիլլա տվի, ես քեզ մեղ'ասսու. դե՛  
փեշըդ բռնա:

Մի քանի բուռը ոսկի տվուց, պապի զենքերը վե կալավ ու  
սի'լավ ձին, գնաց: Գիտի ոչ ուր ա էթըմ: Մի բարակ ճամփա ըն-  
կավ ճառաշը՝ գնաց ու գնաց:

Իրիկունը թաքավորը հարցրուց թաքուհուցը թե. — Մեր տղեն  
ճողով ա, շի էրեմ:

— Ես էլ չգիտեմ ճողով ա, — ասեց:

— Մի բինիշս բե՛ քցա վրիս, էթամ տենեմ էտ տղեն ի՞նչ էլավ:  
Քառասուն հատ գոմ ուներ, եռեսուն իննը ման էկավ տեհավ  
հեշ բան պակաս չէր, մտավ էն մի գոմը՝ տեհավ բող ձիու քուռա-  
կը շկա. կանչեց թավարաշուն. — Հալիվոր, ճամեն բան թամամ ա,  
բա մեր բող ձիու քուռակը ճողով ա:

— Թաքավորն ապրած կենա, դու գիտե՞ս ոչ, որ քու տղեն  
գնացել ա Ղարաբուռատ Ղահրըմանի ախլկա գլուխը բերելու:

Ծնկանը տվուց ու ճուշաթափ էլավ թաքավորը:

Խարարը գնաց կնկանը, կնիկը ընչար ջուր բերիլը, ավատա՛,  
կես մահացավ:

— Թաքավոր, — ասեց, — ի՞նչ բանի ես, տղա ա, գնացել ա՝  
կդա:

— Ա՛յ կնիկ, էտ անիծածը հազարավոր մարթիկ ա սըպանել,  
իմ տղեն նրան ինչ կարա անի: Գնաց, էլ գալ շի, իմ իլլաճը ինչ  
կըլի: Իմ թաքավորութունը ում պըտի հասնի:

Ասեց ու սկսեց լաց ըլնիլ, հաշկերիցը սելավի պես արտաշ-  
սունքը թափվեց:

Կնիկը ասեց.— Այ մարթ, հո դու շահել չես. տղա ա, գնացել  
ա, կդա, այ քու տունը աստված շինի:

Տղեն գնաց մի նախրչու թուզ էլավ:

Տեհավ նախրչին նոթերը կիտել ա:

— Բարով քե, նախրչի, — ասեց:

— Ասսու բարին:

— Էտ խի՞ ես նոթերդ կախ արել:

— Թաքավորի որթի, գնա՛ քու բանին, ի՞նչ ունես ինձ հետ:

— Նախրչի, ինչ ուզես՝ կտամ, հըլա ասա տենեմ ընշի՞ հըմար  
ես նոթերդ կիտել,

— Թաքավորի որթի, — ասեց, — Էս քաղաքի կեսը սելավը տա-  
րել ա:

— Ե՞փ, այ տղա:

— Բա զիտես ոչ, որ էս քաղաքը Ղարաբուկուս Ղահրըմանի  
ախշկա քաղաքն ա. խարճի համար հինգ հրոպակա եղացրին, էկավ  
սելավը տարավ. հինքն էլ անխարճ առնիլ գնաց:

Թաքավորի տղեն ձիուցը վեր էկավ, խուրչինը բաց արուց:  
իրեք բուռը ոսկի տվուց նախրչուն:

— Խի՞ ես տալի էս փողը ինձ:

— Ոտիդ մեռնեմ, էտ ախշկա տեղը ասա՛ ինձ, ես դրա հետ  
բան ունեմ:

— Որ ըտենց փափագը ես նրա էրեսը տենելուն, էտ բանցը  
տունը տենը՞մ ես, ընտեղ մի հալիվոր մարթ կա, գնա՛ նրա կուշ-  
աը, նա՛ քեզ կասի:

Թաքավորի տղեն ձին քշեց գնաց, էտ դռանը վեր էկավ:

Նորարն էկավ ձին քաշեց ներսն, խուրչինը վե կալավ, նի մտավ  
օթախր. Տեհավ մի հալիվոր մարթ, բամբակով շորս դիճը շինած,  
մելը նստած ա:

— Բար' աջողըմ, ափու շա՛ն, — ասեց:

— Ասսու բարին, որթի շա՛ն, հազար բարի ես էկել:

Հնկավ հալիվորի ոտը:

— Ի՞նչ խարար ա, շանըմ, որ դու իմ ոտն ես ընկնըմ:

— Ափու շա՛ն, ես Անա թաքավորի տղեն եմ, կարելի ա ճա-

նանչես. մենք էլ իրեք ախպեր ենք, էրկու ախպերս գնացին, որ հորս հրմար ավ բերեն, գնացին՝ լեկան. իրեք սար ման էկա, գնացի Ղարաբուղա Ղարըմանի ախչկա սարը, մենձ ախպորս քթակը քարի արանքըմը գտա:

— Հըմի բա դու հ'ուր ես էթըմ:

— Էկել եմ քու կուշտը, որ քեզնից ճամփա հ'իմանամ, էթամ իմ ախպորտանց հայիֆը<sup>1</sup> առնեմ:

— Ե՛, որթի, շատ դժար ա դրա տենիլը, թե տենես էլ՝ շատ դժար կտենես, լավն էն ա, որ ետ դառնաս գնաս, ափսոս ես:

Թաքավորի տղեն ըլեղ խնթրեց, աղանեց, որ ճամփա շանց տա, էթա:

— Ե՛, որթի,— ասեց հայիվորը,— վե կա՛ց էտ պղինձը վե կալ, մի լավ խաշիլ էփա՛ ես ուտեմ, ետո ամեն բան կասեմ:

Տղեն վե կացավ եղին-եղին կրակն արուց, խաշիլն արուց, եղն ածեց մելը, դրուց հայիվորի հ'առաջը:

Լավ կերավ հայիվորը:— Շատ ապրիս, ա՛յ տղա, ըսդար վախտ ա՝ բսենց անոշ խաշիլ կերել չի: Դե հ'արի նստի՛ ես պատմեմ:

Տղեն նստեց:

— Ա՛յ տղա,— ասեց,— մի վե կաց, հ'արի կուռս բռնա, ինձ վե կացրու:

Կուռը բռնեց, հայիվորին վե կացրուց տեղիցը:

— Դե ինձ հետ հ'արի՛, ա՛յ տղա,

Գնացին, մի օթախի դուռը բաց արին: Մի հատ ծովեղեն գլամ տվուց դրան, էկան ըլեղ հ'իրանց տեղը նստեցին:

— Դեհ պատմա, ոտիդ մեռնեմ,— ասեց թաքավորի տղեն:

— Որթի, էտ գյամը գիտե՞ս ինչ գյամ ա. կէթաս մեր սարը, մի բարակ ճամփա կրնկնի հ'առաջ, կքշես ու կէթաս. օխտն օր, օխտը քշեր որ էթաս՝ դեմ կառնես մի ծովի, որ դեմ առար ծովին՝ ձիուցդ վե կդաս, ձիդ կանես շալլաղը. ըստեղից վե կուռես օխտը կտոր դմակ, մի սաղ ոչխարի կես շանդակը, մի պումուր դաստա էլ կանանչ խոտ վե կուռես, էտ բուրոր կդնես խուրջնիդ մելը. որ վեր էկար, ձիդ արիր շայլաղը, կտանես գյամը կքցես ջուրը, քաշելուն պես ծովեղեն ձին դուս կդա, դու բանի փախչես՝ ձին բամակիցդ կդա: Ետ կդառնաս ձիուդ վրա, ձին կէթա ձիուդ կուշտը կորիվ

<sup>1</sup> Ալիր, (ծանօթ. քանանավակի):

կանի, կէթաս կրոնես, կթամբես ու նի կըլես։ Կէթաս կհասնես ծովի  
էն զրհի տուտը, ձիու գյամը կհանես՝ կկապես միշկիդ, քու խուր-  
շինը վե կունես. ըդար տեղը գիտեմ, էլ ուրիշ բան չի գիտեմ։

Տղեն դառավ ասեց.— Հալիվոր, որ հասա, դրանից ետ իմ իլ-  
լաճն ի՞նչ կըլի։

— Որիի, ըդար տեղը գիտեմ, էլ զատ չգիտեմ։

— Դեհ մնաս բարո՞վ, հալիվոր, շատ շնորակալ եմ։

— Աստված քու հետ ըլի, մենակ՝ քեզ մուղաթ կաց, ափսոս  
տղա ես, ինձ որ լսել՝ էթալ չես։

— Բնշի՞ հըմար, հալիվոր։

— Քսանօխտը տարի ես Ղարաբուլուտ Ղահրըմանի կիրակուր  
էփողն եմ էլել, մենակ՝ ո՛չ հիրան եմ տեհել, ո՛չ ձին։

— Բա՛ դրա կիրակուրը ո՞նց ես տարել։

— Տարել եմ դրել օթախը, հինքն էկել նստել կերել աւ։

— Դե՛հ գնա, աստված քու հետ ըլնի։

Տղեն ձին նստեց գնաց, Գնաց, շատն ու թիշը աստված գիտի,  
գնաց հասավ ծովի դրաղը, հալիվորի ասածին պես ծովեղեն ձին  
բռնեց ու նի էլավ, Հանց կացավ ծովի էն զիհը։ Ետ թամաշ արուց՝  
տեհավ ըտեղ մի ձեռք տներ կա. որ շուտես, շմմես, էտ տներին  
թամաշ անես։ Տղեն մնաց կաննած թամաշ անելով։ Հաշկը բցեց  
էս պատին, էն պատին՝ դարդյան շտեհավ, որ նի մննի, Խուրչինը  
ձեռին կաննած աւ։ Անկարծ տեհավ մի շահել ախշիկ, քսան հուս մեկ  
ուսին ա կախ էլած, քսանը՝ մեկ ուսին։

Ասեց.— Ի՞նչ անեմ, թե ես անկարծ դրան բարով տամ, վայ թե  
բիրտան ինձ սըպանի։

Ախշիկն էլ անկարծ տեհավ ծովի դրաղին արևի շողի<sup>1</sup> հետ մի  
տղա կաննած աւ։

— Ախսպե՛ր,— ասաց,— էտ ի՞նչ բան ա, հրեղե՞ն ես, թե հո-  
ղեղեն։

— Զէ՛, քիր շան, — ասեց տղեն, — ես հողեղեն եմ, էկել եմ  
քու կուշտը։

— Դե՛ որ ըտենց ա՝ համեցե՛ք, Դե՛ կաննի, ա՛յ տղա, թե քե-  
մարիֆաթ ունենաս՝ ես կիմանամ, նոր կտանեմ իմ կուշտը։

Սկսեց թամաշ անել էտ տղին։

<sup>1</sup> Բիագրում՝ ցող է, կարծում ենք վրիպակ է, (ծանոր. կազմողի)։

Տղեն թամաշ արուց, որ մի ասլան պողպատի դռան քամակին կապած ա, զափլանն էլ էն դիւն էր կապած զնջըլով:

Ասեց. «Էավ կըլի էս դմակի կեսը քցեմ ասլանին, կեսը՝ զափլանին, տեսնենք ինչ կըլի մեր իլլաճը»: Մինը մի ձեռն առավ, մինը՝ մի ձեռը, էն մի ձեռինը քցեց ասլանի հառաշը, էն մինը քցեց զափլանի հառաշը: Դրանք էտ դմակուն էլան, տղեն անց կացավ: Ախմկը տեհավ, որ տղեն խելքը գլխին տղա ա:

Տղեն գնաց հասավ մի հուրիշ դարպաղի, տեհավ էրկու դոչ կա կապած, դու չեն՝ մի մին ասլան են: Հանեց կանանչ խոտը, քցեց դրանց առաշը՝ անց կացավ: Գնաց տեհավ մի դուռ հետ արած ա, էտ դուռը բաց արուց, էտ էլ անց կացավ, գնաց մի հուրիշ դարպաղի կուշտ: Թամաշ արուց, տեհավ մի հատ ալ ձի, որ խրխընքը ա՝ երկինք-գետինք դողըմ ա:

Ախմիկը էկավ ու տղի բիլակը բռնեց, ասեց.—Հարի՛ էթանք իմ օթախը, ո՞ւ ես էթըմ:

Տեհավ տղեն շատ խամ տղա ա, ափսոսեց: Տարավ իր օթախը, ասեց.—Ա՛յ տղա, էտ ո՞ւ ես էթըմ անիմանալ, կամ ո՞ր դեհան ես գալի, կամ հո՞ւ ես էթըմ:

Տղեն հիրան քցեց ախշկա ոտը:

Ախմիկը բռնեց տղի կուռը, ասեց.—Վե՛ր, վե՛ր, վե՛ր, ափսոս ես, էտ ինչ ես անըմ, քու շահելութունին արժան ա՝:

— Դե՛հ, քեզ մեղա, քու աստծուն մեղա, ես կասեմ իմ ցավը, բալրի դու մի իլլաճ անես: Իրեք ախպեր ինք, Անա թարավորի էր տղեքն ենք. մի օր էրկու ախպերս գնացին որ հորս հրմար ալ բերեն, գնացին՝ էլ չէկան: Ետո ես գնացի ման էկա, մենձ ախպորս քթակը քարի արանքըմը գտա:

— Ո՞ր սարն էր, ա՛յ տղա:

— Ղարաբուտա Ղահրըմանի ախշկա սարն էր: Լսել եմ, որ էտ ախմիկը էլել ա՝ սելավ ա արել, իմ ախպըրտաննցը քշել ա տարել, հըմի էկել եմ, որ հիմանամ՝ սո՞ւտ ա, թե զորթ ա:

Ախմիկը ծիծաղաց, ասեց.—Մենակ դո՞ւ ես, ա՛յ տղա, ըտենց հազարավորն ա պատահել, Որ քեզ ճամփա շանց տամ՝ ինձ ի՞նչ կտաս:

— Դու իմ քիրն ես, կորուտ ունենաս՝ գտնեմ, բերեմ տամ քեզ:

— Որ ըտենց ա, ինձ մինումար ախպեր ունեմ, բռնված ա, օխտը տարի ա. թե նրան բերես ինձ տաս՝ ես քեզ լավութուն շատ

կանեմ, քեզ իլլան անի՝ Ղարաբուկուտ Ղահրըմանի ախշկա տակի խսլու ձին իլլան կանի, զնա՛ ընենց մտի մսուրքը, որ ձին էլ վիմանա. Կէթաս լաց զըլիս, ձին քեզ կասր. «Իսան օղլի, խի՛ ոս լաց ըլլըմ», դու նրան ցավդ կասես, նա քեզ իլլան կանի:

Տղեն գլուխ տվուց ախշկանը, շնորակալ էլավ, ֆնաց, Գնաց, ուսուլով մտավ ձիու մսուրքը, մղկըտաց, գոռաց, ճշաց, հենց լաց էլավ, որ ձիու խիղճն էկավ, լիզու էլավ՝ ասեց. «Իսան օղլի, խի՛ ես լալիս, բու ցավն ի՛նչ աՅ:

— Վիրե աստված,—ասեց,—ներքեւ դու, իմ ցավից ազատողը գու պըտի ըլես:

— Ասա՛ տենեմ բու ցավն ի՛նչ աՅ:

Ասեց.—Ընդար տանշանքով էկել եմ հասել ըստի, որ էտ ախշիկն առնեմ:

— Տեհած կա՞մ էտ ախշիկը:

— Զէ՛, կաթիդ դուրպան, տեհել շեմ:

— Դու ո՞ւմ տղեն ես:

— Ես Անա թարավորի տղեն եմ:

— Դե որ ըտենց ա, վե՛ կաց, բոլ ա լաց ըլես: Կէթաս քառասուն օթախ բաց կանես, քառասուն օթախը անց կկենաս, մի հատ օթախ կա՝ ոսկով զարթարած, ախշիկը էտ օթախըմը քնած ա, մենակ թե՛ վրա շարժնես պաշես, կվեկենա միսդ կքրքրի. էտ հասակի ախշիկ ա, նրա էրեսը իսան<sup>1</sup> չի տեհել: Եռեսուն ութը օր քնել ա, մնըմ ա էրկու օր, որ վե կենա: Մի հատ թախտ կա էտ օթախըմը դրած, վրին մի բութուրգա կա, մի ըստաքան. Հազարեն դաստան բիլրուկը ծովի վրին կախ տված ա. որ նի կմննես օթախը՝ հառաշինը զլուխ կտաս Հազարեն դաստան բիլրուկին, ետո կդառնաս բութուրգին. ետո ոնների տակի էրկու շամադանը վե կունես, կտանես զլխավիրեւ վե կդնես: Գլխավրինը կրերես ոնների տակը կդնես ոչ ձեռդ կառնես ըստաքանը, բութուրգից կլրքցնես:

Տղեն ասեց.—Կաթիդ մեռնեմ, էտ ջուրը ի՛նչ ջուր աՅ:

— Զահար ա, համա անվնաս ջուր աՅ Կխմես, կասես. «Թխա՞յի, էտ ինչ լավ ջուր էր. ես իմ կյանքըմն ըսենց ջուր չի խմած»:

Բիլրուկը կասի թե. «Հազար բարի ես էկել», խոսալ շես: Հա՞:

<sup>1</sup> Մարդ, (ծանոր. քանանակի):

թիլլուկը կասի. «Գիտեմ քու միտքը, դու մեղավոր չես, ձին ա մեղավորոց, էլի ձեն չես հանիլ»

Տղեն գլուխ տվուց ձիուն, ետ դառավլ։ Գնաց քառասուն օթախոր քաց արուց. ընենց բրտինք ա թափել վրին, որ հաշկերի գիլերից<sup>1</sup> էլ ա թափշմ սելավի նման։ Նի մտավ ախշկա օթախոր, գլուխ տվուց Հազարեն թիլլուկին, ետ դառավլ ախշկանը թամաշ արուց, տեհավ, որ համեն մի ձեռի վրա տասը փթանոց ծակ քար կա. որ օյանմիշ էլավ՝ էն քարերը շխկացնի, նոր ձենին քնի, որ տենի մարթ շկա։ Ետ ախշկան որ տեհավ, տղի մազերը թիզ-րիզ էլան, համարյա ուրմի<sup>2</sup> դուռը գնաց։ Դառավլ էկավ դըրա թախոր, գլուխ տվուց բութուրգին, ըստաքանը լբցրուց ու խմեց. ընենց դառն էր, ոնց<sup>3</sup> որ սցի յաղու, ասեց. ս՛խամ՝ յ, ինչ անուշ ջուր էր, իմ կյանքը ըսենց ջուր խմած շիս։ Նոր դառավլ էկավ դըրա ախշիկը. ոսկի աղլուկը էրեսը քաշած, վախտուն հուս մազերը գլխատակը դրած։ Գլխավիրկի շամադանները վե կալավ ոնների տակը վե դրուց, ոնների տակինը տարավ գլխավիրկ վե դրուց. թամաշ արուց, տեհավ էրկու շամադան կա՝ ոսկի, անդին քարով շարած, ընենց վառված ա, ոնց որ կրակը, էտ շամադանի մեշը մումը դրուց, մինն էն կողրին դրուց, մինն էս կողրին դրուց. էկավ ոնների տակին կաննեց. մի քիչ կացավ, ախշիկը եռաց ու քարերը շղզկացրուց, էտ օթախոր սաղ եռաց. ախշիկը դառավլ մեկել կողրին՝ քնեց, Մըն էլ տեհավ սարը էկավ ախշիկը, Տղեն ասեց.— Առողջութուն, թաքավորի ախշիկ։

Բիլրուկն ասեց.— Խեր ըլի, ա՛յ տղա, խի՝ ես էկել:

Տղեն ասեց.— Քեզ տենելու եմ էկել:

— Հա՛, — ասեց,— գիտեմ, ձին ա ասել քեզ, դում մեղավոր շես։

Էտ քշերը տղեն ընչար լիս կաննած մնաց։ էկավ էքսի օրը. էկավ էն ժամանակը, որ սարը էր գալի, էլի՝ էն ժամանակը սարը էկավ։

— Առողջութուն, թաքավորի ախշիկ, — ասեց տղեն։

Էտ օրն էլ անց կացավ, տղեն կաննած մնաց։ Առավոտը լիսը քացվելուն պես բիլրուկը սկսեց խոսալը՝ շատ սիրուն, քաղցր խոսալը. էկավ սարը գալու վախտը՝ սարը էկավ։

<sup>1</sup> Բիր, (ծանոր. քանանավարի)։

<sup>2</sup> Մահվան, (ծանոր. քանանավարի)։

<sup>3</sup> Ոնց քառը քնագրում չեղել, հավանաբար վրիպել է, (ծանոր. կազմնդի)։

— Առողջութուն, թարավորի ախշիկ:

Ախշիկը նստեց. որ պատկերն ընկալ տղի հ'էրեսին, տղեն ուշագնաց էլավ: Մի հինգ հրոպակից տղեն օյանմիշ էլավ:

— Կյանքիդ ողջութուն, թարավորի որթի, — ասեց ախշիկը: — Իմ սեհրին կորավ. իմ պատկերը տննող էլու էլել, որ դու տեհար՝ եւ քունը, զու իմը. Մենակ պաս պըտի մնանք, ընշար էթանք բու հոռ կուշտը. բու էրկու ախտորը ես եմ վնասել, հերդ դապու կանի՞ ինձ առնելը: Քանի օր մնանք ըստեղ՝ ո՛չ բու նաֆասը պըտի իմ նաֆասին դիպչի, ո՛չ իմը պըտի քունին դիպչի:

Բիլրուկը խոսաց թե. — Աստված կատարի, աստված կատարի:

— Դե, ա՛յ տղա, էստեղ արի, հ'ուշդ չէթա, իմ վաթսուն հուսանի տակին իրեք հատ բալանիք կա, տար էրկու օթախը բաց արա', իսկ էն մի օթախը բաց շանե՛ս:

Տղեն վեր կացավ, բալանիքը ետ արուց. մաղերը բանցրացնելու ժամանակը հորին էր տալի, ախտերտինըն էլ մտահան արուց, բալանիքը վեր կալավ, մի օթախի դուռը բաց արուց, տեհավ մի հատ ձիու թամբ կա, մի հատ դյամ կա, մի ալրշումի ծածկոց կա. Էտ իրեք կտոր բանը արեկի նման փալլըմ էր: Դուռը շինեց, զնաց էն մի օթախը, տեհավ բաց վի ըլըմ՝ բոթեց<sup>1</sup>, զոռով բաց արուց, տեհավ մի մենձ օթախ՝ լիքն անգին բարով, ուկով, Ըտեղից էլ ետ դառավ, էլի դուռը շինեց. էկավ էն մեկել օթախի կուշտը. Ենս որ բաց անեմ, նա ինձ ի՞նչ պըտի անի, մի բան որ առել, պրծել առ: Սկսեց օթախի դուռը բաց անիլը: Բաց արուց, տեհավ զատ շիա, թամաշ արուց պատին, տեհավ մի հատ ճափ հուլ, ուեղին զայթանը նով կապած, կախ ընկած. մըն էլ տեհավ, որ էտ հուլի զայթանը հ'իրան-հ'իրան երկարեց՝ դիպավ էս պատին, դիպավ էն պատին, շարթեց ծովի զրադի շուշեն, ընկավ ծովը: Ետ դառավ էտ դուռը շինեց, փոր ու փոշման էկավ թարավորի ախշկա կուշտը:

— Հըմի ո՞նց ես շինքդ դո՛ւ քաշեմ, — գոռաց ախշիկը:

Տղեն ծատուն շհանեց:

— Հըմի վե կենամ հ'աշկերդ հանեմ. իմ պատկերը տեհել ես, անհնար ա, կարալ շեմ հանիլ, հ'աշկդ դուս դա, էքուց ինձ հըմար տախ» կանես, ձեռդ շեմ ընկնիլ: Օխտը տարի պըտի դու ման՝ գառ ինձ, որ նորից ձեռ բերես: Խնամ շունեմ<sup>2</sup> էթաս ձիու մսուրքը ընկ-

1 Հըեց, (ծանոր. բանանավանի):

2 Իցե թե, (ծանոր. բանանավանի):

նես, ոնց որ լաց ես էլել՝ ընենց լաց ըլես, իցե թե<sup>1</sup> ձին իլլամ անի  
քեզ, թե չէ բու բանը չի ինձ գտնիլը:

Էտ ծովը Արևելքի թաքավորի սահմանը մն էր. Էտ Արևելքի  
թաքավորը հ'իրա տոնը կատարը մ էր, ձկնապաններին կանչեց,  
տասը թռոշու, ասեց.— Որթիք ջա՞ն, ըսօր ինձ ձուկ կրոնեք՝ կրերեք  
ինձ, ինչ որ ձեր վարձն ա՝ մեկին էրկու ինձանից կստանաք:

Զկնապանները գլուխ տվին, ետ դառան. վե կալան հ'իրանց  
թռոները, գնացին դըրա ծովը. հ'առավոտվանից ընչար հ'իրիկնա-  
պահ հել բան լկալան. մի թռոշին շատ սամթին թռո քցող էր.—  
Տղե՛ք,— ասեց,— մի տարի ըստեղից մի ձուկն եմ հանել, որ մի  
թաքավորութուն արժեքը, կաննեցե՛ք, մըն էլ պըտի քցեմ:

Թռոր քցեց, քաշելուն պես մի ոսկե ձուկ դում էկավ:

— Տղե՛ք,— ասեց,— էս ձկնից ո՛վ ա տեհել:

— Շատ արթար ես ասըմ, ըտենց ձուկը մենք տեհել չենք մեր  
կյանքի մեշը:

— Սրա փորըմը զատ կա, տենըմ եք իժդար ա ուսած:

— Տղե՛ք, բերեք մորթենք էտ ձուկը:

— Է՛, ափսոս ա ձուկը, բերեք տանենք թաքավորին տանք,  
մի բանի մանեթ կառնենք՝ խարչլըդ կանենք:

Զկնապանը գնաց դալալի կուշտը, ասեց.— Ախակեր, գնա՛ թա-  
քավորի ոսկե բողնոցը, մեկել հ'իրա թամուզ աղլուխը վե կալ բե՛ր:

Դալալը գնաց աղլուխը և ոսկի բողնոցը բերուց. կանանչ խոստ  
քաղեցին դրին ձկան տակը, աղլուխը քաշեցին հ'էրեսը, տարան  
տվին թաքավորին:

Թաքավորը տեհած, որ էտ տեսակ ձուկը հ'իրա կյանքի մելք  
տեհած լի, ասեց.— Նազի՛ր, էս տեսակ ձուկը տեհած կա՞ս:

— Չէ՛, թաքավոր, էս հ'առավի անդամն ա:

— Դե տա՛ր, իմ ալմազ դանակովը մորթա, տես փորինը ինչ ա,  
վե կալ բեր:

Նազիրը ձեռները քշտեց, ձուկը առավ, տարավ մորթեց, փորը  
բաց արուց, տեհավ մի հատ հուլ՝ դեղին դայթանով. բերուց թաքա-  
վորին տվուց:

— Ա՛յ տղեք,— ասեց թաքավորը,— էս ի՞նչ բան ա:

<sup>1</sup> Այս արտահայտությունը բանահավաքինն է. բանասացը կասեր՝ բալթի թե,  
կամ ժողովրդական մի այլ սեռվ, (ծանոր. կազմողի):

— Թաքավոր,— ասեց վազիրը,— ինձ մի հեր ունեմ՝ հարիր եռուն տարեկան ա, թե իմանա՝ իմ հերը կիմանա:

Գնացին բերին հալիվորին, մտիկ տվուց, ասեց.— Ճանանշը չե՞ս, թաքավոր:

Ասեց.— Ըստ բան ես չեմ ունեցել, ի՞նչ ճանաշեմ:

Ասեց.—Մի թամուղ աղլուխ բերիլ տուր, հուլը սրբա՛. ա՛յ տղա, էս հուլը Ղարաբուղուտ Ղահրըմանի ախշկա հուլն ա. էս հուլն ա, ո՛ր ախշիկը տենես ինչ տեսակ ա՝ հուշըդ կէթա քառասուն օր:

— Ես էտ ախշիկը ձեռք կբերեմ,— ասեց թաքավորը, — որ ձեռք բերի՛ քեզ լավ կշահեմ: Դե՛, հալիվոր, գնա՛ քու տունը:

Թաքավորը դալալը քցեց քաղաքի մեջը թե.— Ի՞նչ մարթ, ի՞նչ կնիկ կարենա Ղարաբուղուտ Ղահրըմանի ախշիկը գտնի բերի, լեռուն ինչ պըտըտի՛ կըտամ:

Ընտեղ կար մի հորեվախ կնիկ, էկավ թաքավորի կուշտը:

— Հը, պառավ,— ասեց թաքավորը, — կարա՞ս ձեռ բերիլ:

Ասեց.— Իմ բանն ա, որթի ջան, ես տարվա գլուխ էկած բանը մի սհաթըմը բանդըմ եմ. իմ բանն էլ էտ ա:

— Դե ուզա՞ տամ:

— Քեղանից կուզեմ տասնէրկու բութուրգա օխտը տարվա գինի, մի հատ զայըդ՝ էրկու մարթ նստելու տեղ, մի հատ տավարնուղ<sup>1</sup> մեջը լիքը հաց. օխտը օր թող զայըդին դալըդը քշի, որ ես սարվեմ, ետո մենակ գնամ բերեմ:

Թաքավորը պառավի ուզածները տվուց, պառավը օխտն օր ման էկավ ծովի հէրեսին, սարվեց համեն բան, զայըդուն ճամփու դրուց, հինքը մենակ նստեց զայըդը՝ քշեց. Քշեց էկավ ծովի էն հէրեսը, էտ տավարնուղը պահեց ավաղըմը, զայըդն էլ պահեց ավաղըմը, հէրեսը ավազոտ արուց պառավը, ծովի դրաղին նստեց:

Գանք Անա թաքավորի տղի կուշտը:

Էտ հուլը կորցնելուց ետո տղեն խնթրեց ախշկանը, թե.— Զին նստեմ, ծովի դրաղը ման գամ՝ սիրտս բացվի:

— Ա՛յ տղա, — ասեց ախշիկը, — քեղանից ձին ո՞վ ա խնայըմ, նիլ ման արի իժդար կուզես, մենակ իմ թամքը շդնես, ուրիշ թամք կա գոմըմը, էն դի՛:

<sup>1</sup> Մաղախ, (ծանօթ. բանանավանի):

Թաքավորի տղեն գնաց ման գալու. էկավ տեհավ մի ծեր կնիկ  
ավազոմը խրված լաց ա ըլըմ:

— Թարով քեզ, նանի՛, — ասեց: — Հուր ես, հրեղեն ես, ի՞նչ  
մարթ ես:

— Հողածին իսան եմ, որթի՛:

— Թա ըստի ի՞նչ ես անրմ, ա՞յ նանի:

— Նանը քեզ դուրպան ըլի, իմ ցավերիցը վաղն արի, որթի՛:

— Ասա՛ տենեմ քու ցավը ի՞նչ ա, ես քու ցավին իլլաճ

կանեմ:

— Որթի, էս ա օխտն օր ա ըստեղ ես լաց եմ ըլըմ, ո՞վ ա իմ  
տերը:

— Այսր իշի՞ հըմար ես լաց ըլըմ:

— Դե, որթի, ձիուդ վրիցը ցած արի, ասեմ:

Ուզեցավ որ ձիու վրից վեր դա, ձին գոռաց, ճշաց, երկինք-դե-  
տինք դողաց:

Զիու փորատակին մի ղամշի տվուց, ջիգյարը փորի մելը  
վառեց:

Զին ասեց. — Այս, երախտամոռ իսան:

Տղեն վեր էկավ ձիուց:

Պառավն ասեց. — Մենք էթօմ ինք նրուտաղեմ, էտ իմ անիրավ  
ընկերատինքը ինձ թողին ըստեղ, ձիս տակիս որ սատկեց, ես էլ ծեր  
կնիկ՝ ոնց էթայի Ծընդերտանցս, ձիու հետ մնացի ըստեղ վեր ըն-  
կած. Աստված քեզ զորացնի, որթի՛, դու լրեիր՝ ես սովից կմա-  
հանայի:

Տղեն ասեց. — Վե՛ կաց, վե կաց, էթանք մեր տուն:

Պառավն ասեց. — Յավաշ, տավարճուղ վեր ունեմ, էթանք:

Տավարճուղ վե կալավ, նստեց տղի թարրը՝ գնացին, Գնացին  
տուն, ախշիկն ասեց. — Էս ի՞նչ, ա՞յ մարթ, կենտ գնացիր, զո՞ւստ  
էկար:

— Վնաս շոմի, կնի՛կ, ծեր կնիկ ա, ի՞նչ պըտի անի մեզ, թող  
մի քանի օր մնա, ճամփա կքենք՝ կէթա:

— Ինձ որ լսես, — ասեց ախշիկը, — դրան դուս կանես:

— Է՛, դրա էլածն ինչ ա, մնըմ ա՝ թող մնա, դրա ձեռից ի՞նչ  
կգա:

Էտ պառավը մնաց:

Մի բանի օրից ետո պառավը սկսեց օթախները ժաքրել, թա-  
ճը դաշնել:

— Մարթ, էս կնիկը շատ լավ կնիկ է, որ բերել ես, — ասեց  
ախշիկը:

Մի օր ախշիկը հրամայեց Հիրա աշլուն. — Տասներկու ունգ  
կիրակուր կէփես. մեղ պառավ ունենք, կղրկենք՝ կտաս կրերի:

Կիրակուները պատրաստեց, բերուց օթախը: Դնաց տավարձու-  
ղիցը վեց բութուրզա դինի հանեց, բերուց դրուց սուփրեն:

— Նանի՛, էս ի՞նչ բան ա:

— Սա երկնային գինի ա, որթի ջա՛ն, խմողը շատ ուրախ հաց  
կուտի:

Ըստաքանները լրցրուց պառավը, տվուց տղին, տղեն էլ տվուց  
ախշկանը: Համենքը մի ըստաքան խմելուց ետո, — նանի, — ասին,  
— շատ լավ բան ա, էտ բիրատի մենք կխմենք:

Նանի ուզածն էլ էտ էր. խմեցին, ախշիկն էլ խուրդ ընկավ,  
տղեն էլ, Պառավը բռնեց ախշըկա ոննից, բաշեց դրբա ծովը, բցեց  
զայրդը ու թեց:

Օխտն օր անց կացավ, ախշիկը հենց իմացավ՝ Հիրա տեղը  
քնած ա, հաշկերը բաց արուց, տեհավ ծովի վրին՝ դայրղումն ա:

— Նանի՛, — ասեց, — ինձ ո՞ւր ես տանը:

— Զարրդ տանեմ, արի բեղ տանեմ ընենց մի թաքավորի տղի  
տամ, որ օրական ինձ օրհնես, ի՞նչ ես էն դառցըվորին առել,  
նստել:

Խարարը դնաց Արևելքի թաքավորին. — Աշքդ լիս ըլի՛, պա-  
ռավն ախշիկը բերուց:

Թաքավորը դրկեց քառասուն ախշիկ, ըտեղից ուրախութունով  
տարավ Հիրա տունը:

Թաքավորը մտածեց թե. ուս ի՞նչ ընծա տամ էս թավուր ախ-  
շկանը:

Վեզիրն ասեց. — Ա՛յ տնաշեն, քթածդ հուլը տուր Հիրան:

Թաքավորը տվուց: Ախշիկը շատ ուրախացավ, որ Հիրա հուլը  
գտավ:

— Ինձ տար մի ջոկ օթախի մեջ դի, — ասեց, — էլ իմ Հիրեսը  
մարթ շգա, դու էլ շգաս ընշար քառասուն օր, քառասուն օրից ետո  
կէթանք կպսակվենք:

Գանք տղի կուշտը,

Օխտը օրից ետո տղեն Հ'աշկը բաց արուց, տեհավ մաղերի քոքն էլ ա ցավըմ. վե կացավ դես ման էկավ, դեն ման էկավ, գտավ ոչ թաքավորի ախշիկը: — Հե՛յ վախ, — ասեց, — պառավը տարել ա իմ անգին քարը: Բա իմ իլլանը ի՞նչ պըտի ըլի: Թեղ գտա, թեղ կորուցի իմ ակն ու արեգակը, — ասեց ու աշքերիցը վեր ածեց:

Գնաց դըրա կիրակուր էփող ախշկա կուշտը, լաց էլավ, աղալեց:

— Ջանըդ դուս գա, — ասեց ախշիկը, — էտ քեզ քիչ ա, որ Հ'ամեն մարթի հավատըմ ես: Գնա՛, էլի ընկի ձիու մսուրքը, բալքի ձին քեզ իլլաճ անի:

Գնաց ընկավ ձիու մսուրքը, շատ լաց էլավ, շատ մղկտաց:

— Հըմի ի՞նչ ա, բերախտ իսան, — ասեց ձին: — Հըլա տված զամշուդ տեղը չի սաղացել:

— Ի սեր ասսու, ես արի՛ դու մի՛ անիլ, ինձ հասցրու իմ տեղը:

— Դե վե կաց շորերդ հանա՛, ընե՛նց կթիմարես ինձ, որ իմ բրտինքը ինձ վեր օղողի: Վե կա՛ց, դռնաղս ու Հ'աշկերս պաշա՛, ես կրաշխեմ, բան չկա:

Տղեն վե կացավ, Հ'աշկերն ու դռնաղը պաշեց, ձիու ընենց թիմար տվուց, որ ձին քրտնքըմը կորավ:

— Դե գնա՛, — ասեց ձին, — Ղարաբուկուտ Ղահրմանի ախշկա դութըմը մի սև աղլուխ կա, վե կալ բե՛ր:

Գնաց բերուց:

— Դե գնա՛ էն օթախի մաքուր թամքն էլ բեր:

Թամքն էլ գնաց բերուց, դռուց ձիու վրա:

— Ղոլան զուշղումս էնպես կձգես, որ փորս էրկուտակվի: Դե արի նիլ ինձ:

Տղեն նստեց ձին, աղլուխը կապեց Հ'իրա Հ'աշկերը, ձին թռավ:

— Տղա՛, — ասեց, — Հ'աշկերդ բաց արա, հասել ենք տեղ:

Տղեն Հ'աշկերը բաց արուց, տեհավ որ ծովի էն դրաղը, մի քառաք են վեր էկել:

Քշեց ձին, գնաց մի պառավի թուշ էլավ:

— Բարուվ քեզ, նա՛նի ջան:

Զին սկսեց մի գոռալը. որ գոռաց՝ էտ քաղաքը թնդոցն ընկավ:

— Նանի՛ ջան, կըլի որ էս քշեր մեղ տեղ տաս:

— Որթի. — ասեց, — քե տեղ կտամ, մենակ ձիուդ տեղ շոմեմ:

- Որ ըտենց ա, արի քեզ փող բախչեմ, ձիուա էլ տեղ տուր։  
 Տղեն մի բուռը ոսկի տվուց, պառավի հանգը<sup>1</sup> թիւացավ, քա-  
 շեց ձիուն էլ տեղ տվուց։  
 — Դե, որթի շան, նստի մի քիշ հաց դնեմ կե՛ր, ճամփից էկած  
 ես, սոված կըլես։  
 — Նանի՛, բա ձեր քաղաքը խի՞ ա ըսենց տխուր։  
 — Ե՛, որթի շան, դրա նազը շատ ա։  
 — Ի՞նչ ա նազը, նանի՛ շան։  
 — Էս մեր հարևան քավթառ պառավը դնացել ա մի հատ շա-  
 հիլ ախշիկ ա բերել մեր թաքավորի հըմար, ախշիկը կաննել ա, թե  
 չեմ առնիլ։  
 — Նանի՛, ես որ քեզ մի մատանիք տամ, կարա՞ս տանի էտ  
 ախշիկան տա, ու ինչ որ ասի՞ գաս ինձ ասնս։  
 Թե՛ կա՞վ։  
 Պառավը վե կալավ մատանիքը, դնաց դըրա ախշիկը. «Դենե՛ք,  
 դենե՛ք անելով մատը ցըցեց։  
 Ախշիկը տեհավ, որ դրա մատը մի մատանիք կա, կանչեց կուշ-  
 տը, ասեց. — Էս ո՞վ տվուց քեզ էս մատանիքը։  
 — Ախշիկ շան, դրա տերը մեր տանը զոնաղ ա։  
 — Զին ի՞նչ ունի ա։  
 — Կապիտ խալու, ընենց ա գոռըմ, որ երկինք-գետինք  
 եռըմ ա։

— Հա՞՝ ասեց, — ես էս քշեր նրա ձենը իմացաւ։ Կէթաս կա-  
 սես էն տղին՝ հառավոտը քշերով ես թաքավորին պատվիր կտամ,  
 որ համամը պատրաստի, ինշդար զորք կա, իրեք զաթ կաննացնի  
 քնշար համամի դուռը, ձին նի՛լի գա իմ օթախի դուռը, ասի. ոչս  
 ձին ծախըմ եմ։ թաքավորը կասի. «Ի՞նչ տամ», հինքն ասի. «Փեշ-  
 քաշ ա։ — Զէ՞՝ կասի, — զինն ասաւ։ Էն վախտը ես դուս կգամ  
 կասեմ։

Պառավը գնաց տղին ասեց. Հառավոտը լիսը բացվեց, տղեն  
 սարքեց ձին, զնաց մեյդանի գլխին կաննեց, Խարարը գնաց թաքա-  
 վորին, թե թաքուհին ասըմ ա. «Իրեք զաթ զորք կաննացրու ընշար  
 համամի դուռը՝ էթամ համամ, գամ քեզ առնեմ։

Թաքավորը շատ ուրախացավ, հրամայեց՝ քոմմա զորքը էկան  
 կաննեցին ըտեղ։

<sup>1</sup> Երակը, (ծանոր. բանահավաքի)։

Տղեն ձին քշեց, էկավ զորքի մեշտեղը կաննեց: Թաքուհին որ  
դուս էկավ՝ ձին մի գոռաց:

Թաքավորն ասեց.— Էս ի՞նչ ձի ա:

Ասեցին. — Սախու ա:

Ասեց.— Ի՞նչ տանք, ա'յ տղա:

Ասեց.— Քեզ փեշքաշ ա, թաքավոր, իմացել եմ քու հարսանիքն  
ա, քեզ փեշքաշ եմ բերել:

— Զէ՛, ևս փեշքաշ շեմ ուզըմ, գինն ասա', տամ:

Թաքուհին հառաւ էկավ, ասեց.— Էտ ի՞նչ խոսք ու զրից ա:

— Էս ձին ժախու ա, թաքուհի. գնահատա' առնենք:

— Մի նիլ տեսնենք ինչ չուռա ձի ա,— ասեց թաքուհին թաքա-  
վորին:

Տղեն վեր էկավ, թաքավորն ուզեց որ նի՛լի, ձին քամակը շուռ  
տվուց, մի բացի տվուց թաքավորին՝ հուշը գնաց:

Ախշիկն ասեց.— Է՛տ էր քու տղամարթութունը, մի ձի էլ շես  
կարում նի՛լիլ. ձին ոի ինձ առ' լր:

Զեռը բցեց ծիռւ յալր՝ թռավ ծիռւ քամակը, ասեց.— Ա՛յ տղա,  
էտ դալիսանը տուր դեսը, էտ գուրզն էլ տո' լր, թուրն էլ տո' լր:

Տղեն քոմմա տվուց:

Ասեց.— Գնացեք մի շատ լավ ձի էլ բերե՛ք:

Թաքավորն ասեց.— Ի՞նչ ես անըմ:

Ասեց.— Էս տղեն նի՛լի մի բիլ հաղ անենք, դու թամաշ արա:

Գնացին մի լավ ձի բերին, տղեն թռավ՝ նի էլավ:

— Ա՛յ տղա,— ասեց,— դու էս ճամփով գնա' զըրա ծովը, տես  
ես ինչ եմ անըմ:

Տղեն գնաց, Ախշիկը թուրը բաշեց, Հաղարեն դալիսանը ձեռն  
առավ աշ ու ձախ կոտորեց, էկավ թաքավորի գլուխն էլ թոցրուց  
ու գնաց:

Գնաց ծովի զրադին հասավ էտ տղին:

— Ա՛յ տղա.— ասեց,— վեր արի ծովի զրադին:

Մարթը օրգանգում բռեց՝ կնիկը վեր էկավ:

— Գիտե՛ս,— ասեց,— ես էս ա քառասուն օր քնահարամ եմ,  
նստի, զլուխս զնեմ ծնկանդ, մի բիլ քնեմ, վե կենամ էթանք. համա  
տես՝ ինձ շպաշես, թե չէ՝ կտամ պինչ ու բերանդ կջարթեմ:

Տղեն նստեց, ախշիկը գլուխը դրուց ծնկին՝ քնեց: Արեգակի  
ուժը դիպավ ախշկա հ'էրեսին, սկսեց քրափնք գալը: Տղեն բռուը

քոնեց բրտնրի տակը, լցվեց, խմեց, ասեց.— Օխա՛յ, զանս դինչաւցավ!— Աշկը բցեց ոսկե մազերըն, կամար ունքերին, ֆինջան աշ-կերին, զավթ չէլավ՝ կռացավ պաշեց: Որ պաշեց՝ ախշիկը վե կացավ.— Էս ի՞նչ արիր, ա տղա՛,— ասեց ու տարավ բերուց մի հատ սիլլա տվուց: Տղի ուշքը գնաց, հինքը նի էլավ ձին հէլավ գնաց:

Իրեք օր անց կացավ, տղեն օյանմիշ էլավ. տեհավ ո՛չ կնիկ, ո՛չ ձի, ո՛չ բան, Սովի բամբին փլըմ ա, հազարավոր ձեն հետը. սկսեց լաց ըլիլ. գնաց ծովի էն գլուխը, էկավ էս գլուխը: Տեհավ որ մի իլխըշի հրես ձիանը բերուց արուց շալլըդը:

— Ա՛յ տղա, — ասեց, — խի՞ ես լաց ըլըմ, ի՞նչ ա էլել քեզ:

— Ա՛յ շանըմ, դրաղ կաց, իմ ցավը շատ ա:

— Ա՛յ մարթ, մի՛ ասա տենեմ ինչ ցավ ունես քեզ, բալքի մի ժլլաճ եմ անըմ:

— Ես Դարաբուլուտ Դահրըմանի ախշիկը առել ի, ընենց մի անկարորութուն արի՝ խոռվեց, վե կացավ գնաց, հըմի մնացել ևմ ծովի էս հէրեսին, ձի շունեմ նիլնեմ էթամ:

— Ա՛յ տղա, բու կնկա ձիու մերը էս իլխու միշին ա, էս օխտը տարի ա գալիս ա բատեղ լաց ա ըլըմ. տամ քեզ՝ նի՛յ, տար հասցրու հիրա բուռակին, թող կարուտները առնեն, էլեղ կրերես, կտաս ինձ:

Տղեն նի էլավ ձին՝ քշեց ծովը, մկրատի պես ձին կտրեց անց կացավ, գնաց գոմի դռանը կաննեց: Տղեն թամքը վե կալավ, ձին քաշեց ներսեւ:

Զին որ տեհավ հիրա մորը, ուրախացավ, ասեց.— Էն դամշին որ տեղեւ իր փորիս տակին, քեզ բախչեցի, գնա՛:

Տղեն գնաց ախշկա հառաւը կաննեց:

— Էլեղ էկա՛ր, սկերես,— ասեց ախշիկը:

— Մեզ՝ ասսու, ես սղալվեցի:

— Դե լավ, — ասեց, — բախչեցի, արի նստի՛:

Էտ քշեր ըտեղ մնաց, հառավոտը ախշիկն ասեց.— Դու մեր ախշկան խոսք ես տվել, որ գնաս նրա ախպորը բերես, կարա՞ս բերի, ես էրկու հետ գնացել եմ, շեմ կարացել բերիլ:

Տղեն ասեց.— Հույս աստված, կրերեմ:

— Դե, վե կաց գնա քե՛ր:

Տղեն գնաց, բուռակի մորը քաշեց դուս, նի էլավ գնաց: Սովն հանց կացավ, գնաց մի սրղլուտ<sup>1</sup> սարի վրա կաննեց: Տեհավ մի

<sup>1</sup> Ցից, (ծանոր. բանահավաշի):

ձեռք տուն կա ըտեղ, բովսարուցը մուխը ցից դուս ա գալի, մարթ էլ շկա:

Զին ասեց.— Տղա, ինձ քշա, գնա՛ էն գլուխն ու արի էս գլուխը, գուրզդ քցա, փորցենք տեսենք ուժ ունե՞ս:

Զին քշեց էն գլուխը, ձիու սաղըու<sup>1</sup> հետ դպվեց, թամքի միշին կաննեց ու գուրզը քցեց: Քցելուն պես պատի մի դիճը փուկ էկավ:

— Ազրի՛ս, տղա,— ասեց մադիանը, — գիտեմ որ հըմի կհաղթես:

Զեն տվուց.— Տների տեր ախալե՛ր, դուս եկեք, կույի վախտն աւ Քսան հոքի դուս էկան:

— Ա՛յ մարթ, դու մի մարթ, մենք՝ քսան, կենտ-կենտ պըտի կոփվ անենք, որիս բախտը կկտրի՝ թող կտրի:

Զին ասեց.— Տղա՛, ինձ մի զամշի կքաշես, որ ջիգյարս փորիս մեշ վառվի, ես ինձ կքշեմ. թուրդ ընենց քցես, որ իմ մի մազը կտրի ոչ, որ կտրվի՝ դեմ կանեմ քեզ արեգակին, կշինեմ քեզ անձող, վե կաժեմ:

Բանցրանալու պես ընենց թուրը քցեց տղեն, որ քսանի գլուխն էլ կտրեց, հիրենք էլ լիմացան:

Զին ասեց.— Ա՛յ տղա, վեր արի, իմ դոլան դուշզունը բոշացրու, մի քիշ նաֆաս առնենք, ետո կովենք:

Տղեն վեր էկավ, դոլան դուշզունը բոշացրուց, ձիուն նաֆաս տվուց, խուրչնից էրկու կտոր դմակ հանեց, տվուց ձիուն կերավ, մի քիշ ման ածեց՝ քրտինքը ցամաքեց, էլի դոլան դուշզունը դայի-մացրուց, նիլավ:

— Տղա՛,— ասեց ձին,— էս էկող տղեքը շատ դոշաղ մարթիկ են, քեզ լավ մուղաթ կաց:

Տղեն աեհավ, որ քսան տղա էլ էկան:

Թամաշ արուց հիրա մադիանին, տեհավ աշու աշկիցը արտասունք ա թափըմ:

— Ա՛յ տղա,— ասեց ձին,— ինձ վրա հողածին չէր նստած քեզանից դայրը, ես քեզ հըմար եմ ցալըմ, թե չէ ինձ հըմար մին ա:

Մըն էլ տեհան քսան հոքին էկան, Ազրելի<sup>2</sup> պես:

<sup>1</sup> Թամակ, (ծանօթ. բանանավանի):

<sup>2</sup> Ազարիկել, (ծանօթ. բանանավանի): Պետք է կարդալ՝ Ազրայիլ, (ծանօթ. կազմողի):

— Հը', — ասին, — մեր քսան ախպորը կերար դու, մենք պըտի-  
բու օսկոռները հալենք ուտենք: — Ասեցին ու ձին քշեցին:

Տղեն դամշին քաշեց ձիու ջանին, ձին քցեց իրան. իժդար թուր-  
քցեցին՝ մի մազը կարացան կտրեն թէ' տղի, թէ' ձիու

— Ա՛յ տղա, սրեն քունն ա, — ասեցին, — քցի' թուրդ:

Տղեն թուրը քցեց՝ տասնը իննը տղի գլուխները կտրեց. ուղեց-  
մին էլ քցի' էն մընի գլուխը կտրի, տեհավ Ղարաբուզուտ Ղահրըմա-  
նի ախշիկն էկավ:

— Հը', — ասեց, — էկա՛, վախիլ մի: Հաստատ տղամարթ ես-  
դու, առա որ առա: Դե թող էդ մընի շըլինքն էլ ես կտրեմ:

Ընց որ զըրդին<sup>1</sup> հասնի զըշին՝ ընենց էլ էտ ախշիկը հասավ  
էտ տղին. գլուխը թոցրեց, թուրը դրեց ճակատին, գլուխ տվուց-  
տղին:

— Ներողութո՛մ, — ասեց, — ես սղալված եմ էլել, որ քեզ պես-  
կտրիծին սիլլով տվել եմ:

— Ներողն աստված ա:

— Դե՛, էս ես թուրը կքաշեմ, ըստեղ կկաննեմ, դու մտի նեք-  
սե, տղին զուս բե:

Տղեն թուրը քաշեց, նի մտավ հարամու տունը, տեհավ զնչըլու-  
կապած ա տղեն, սկսեց զնշիլը ետ անիլը:

Հըմի ի՞նչ զիտի էտ տղեն՝ թե ազատող ա, թե սըպանող ա. ըն-  
կել ա ոնները աղալըմ ա. «Ինձ մի՛ սըպանեք, մի հոր ճրաք եմ»:

Տղեն զնշիլը քանդեց, տղին զուս բերուց: Տղեն որ Ղարաբու-  
լուտ Ղահրըմանի ախշկան տեհավ՝ ուրախացավ, ասեց. — Էլ ինձ-  
շեն սըպանիլ:

Մի ձի էլ գոմիցը հանեցին, էտ տղին նստացրին, քշեցին զնա-  
ցին:

Հասան ծովի դրաղը, կնիկն ասեց մարթին. — Էս մարթի ձին  
խամ ձի ա, չի կարա ծովը հանց կենա. ես կնիկմարթ եմ՝ ընդար-  
ուժ շունեմ, որ դրան պահեմ, դու կարա՞ս էտ տղին պահիլ:

Ախշիկը էլի փորցըմ էր տղին. ուզըմ էր տենի, թե կռներըմը-  
հունար կա՛, թէ՛ չէ:

Տղեն ասեց. — Է՛ս սըհաթը: — Զեռը քցեց տղի դոլթուղը, վե-

<sup>1</sup> Բագե, (ծանօթ, բանանավացի):

կալավ՝ ոնց որ մի առյուժ վեր ունի մի ղըշի, դրուց թամբի առաջնու քշեց ձին:

Սովորը զուս գալուն պես ախշիկն ասեց.—Ա՛յ տղա, դու գլուխ ես՝ ես ոտք, Հ'արի՛ Հ'առալ ընկի:

Տարան տղին տվին քվորը, ասին.—Է՛ս ա քու ախպերը:

Թե՛.—Հա՛, երկնքից-գետինք շնորակալ եմ:—Քիր ու ախպեր փաթռնվեցին Հ'իրար:

Մի բանի օր ըտեղ մնացին. Ղարաբուտ Ղահրմանի ախշիկը կանչեց էտ ախշրկան Հ'իրա կուշոր, ասեց.—Ես գնալու եմ, թե որ ետ էկա՝ էկա. թե չէկա՝ իմ հոր թաքավորութունը քեզ:

Վե կալավ Հ'իրա Հազարեն դաստան բիլըուլը, տղի հետ ձի նստեցին, գնացին: Սովորը զուս գալուց ետո ախշիկն ասեց.—Ա՛յ տղա, Հ'առալ ընկիր, իրավունքը քունն ա, ձեր տունն ենք էթըմ:

Քշեցին գնացին Անա թաքավորի քաղաքին մոտացան:

— Դե՛ ձիս բոնա, ա՛յ տղա, — ասեց ախշիկը, — թուրը քցեց շլինքը, գնաց կաննեց թաքավորի Հ'առալ:

— Ես եմ, — ասեց, — Ղարաբուտ Ղահրմանի ախշիկը, ես սրպաննեցի քու էրկու տղեն, Հալալ կա՞նես, որ առնեմ քու պուճուր տղիդ:

— Հալալ ա քեզ, որթի ջա՞ն, — ասեց Անա քաղաքի թաքավորը, վե կացավ ախշկա ճակատը պաշեց, ձեռիցը բոնեց տարավ ներսեւ:

Սիստն օր, օխտը քշեր հարսանիք արին, էտ տղին ու ախշկանը պսակեցին, Մի վախտ Հ'անց կացավ, թաքավորը մեռավ, էտ տղեն դառավ թաքավոր:

Սրանք Հասան իրանց մուրազին, մենք էլ Հասմենք մեր մուրազին, երկրնքիցը իրեք խնձոր վեր ընկավ. մինը՝ ասողին, էրկումը՝ լսողներին:

